

# **Հայաստանի Հանրապետության պետական սահմանով բացթողնման պարզեցված կարգը հաստատելու մասին**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

--մայիսի 2023 թվականի N ---Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ  
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական սահմանի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով  
բացթողնման պարզեցված կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող օրվանից:

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2023թ.**

\_\_\_\_\_ - Ի

**N \_\_\_\_\_ որոշման**

## ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԲԱՑԹՈՂՆՄԱՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանով բացթողնման պարզեցված կարգը:
2. Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, Անվտանգության խորհրդի քարտուղարը և անդամները, Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն անցնում են պարզեցված կարգով՝ ազատվելով նույնականացման գործընթացն անձամբ անցնելու պահանջից:
3. Նույնականացման գործընթացն անձամբ անցնելու պահանջից ազատվում են նաև Հայաստանի Հանրապետությունն ժամանող օտարերկրյա պետությունների, կառավարությունների, խորհրդարանների, փոխվարչապետների, միջազգային կազմակերպությունների և այլ միջազգային կառույցների ղեկավարների և նրանց լիազորած պաշտոնատար անձանց, Սահմանադրական դատարանների նախագահների, գլխավոր դատախազների, նախարարների և նախարարին հավասարազոր կամ ավելի բարձր կարգավիճակ ունեցող պաշտոնյաների գլխավորած պատվիրակությունները:
4. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված օտարերկրյա պատվիրակությունների ղեկավարները, իրենց ձեռքի իրերը և ուղեբեռը ազատվում են անվտանգության ապահովման նպատակով իրականացվող գննման ընթացակարգերից:
5. Օդանավակայաններում տեղակայված անցման կետերում պաշտոնական պատվիրակությունների կազմի, մեկնման և ժամանման տվյալների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի համար հիմք է հանդիսանում ժամանող կողմի դիմումը ստանալուն պես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության կողմից օդանավակայան հասցեագրված գրությունը:
6. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված անձանցից բացի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության հայտի հիման վրա՝ այլ պաշտոնատար անձինք, նրանց ձեռքի իրերը և ուղեբեռը կարող են ազատվել անվտանգության ապահովման նպատակով իրականացվող գննման և նույնականացման գործընթացն անձամբ անցնելու ընթացակարգերից: